

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Մեծ բանաստեղծի հարուստ գրական ժառանգության մեջ նրա նամականին պատմական-սագրական խոշոր նշանակություն ունի: Լեվոնի Իսահակյանի նամակները, որոնք ընդգրկում են շուրջ յոթ տասնամյակ (1889 թ. մինչև 1957 թ.), նշանակալի չափով հանդիսանում են նրա՝ քանիցս սկսված, բայց միշտ ընդհատված օրագիր-հիշատակարանի լրացումները: Պատանեկության օրերից մինչև կյանքի վերջին ամիսները Իսահակյանը նամակագրություն է ունեցել իր ձեռնարանական և համալսարանական ընկերները, զաղափարակիցների և զրշակիցների, գրականության, արվեստի և գիտության գործիչների, ուսուցիչների, աշակերտների, կոլտնտեսականների, բանակայինների հետ... Իր նամակներում մեծ քնարերգուն նույնքան անկեղծ ու անմիջական է, որքան իր հոգեբուխ ստեղծագործությունների մեջ: Նամակներում նա արտահայտել է իր խոր, զգայուն սրտի հույզերը, վիշտն ու ուրախությունը, հույսն ու հուսահարությունը, իր՝ խոհերն ու մտորումները հարազատ ժողովրդի ճակատագրի, նրա ներկայի և ապագայի մասին...

«Պատմա-բանասիրական հանդեսի» ընթերցողների ուշադրությանը ներկայացվող այս նամակները, որոնցից մեկը հասցեագրված է Հովհ. Թումանյանին (N 1), երեքը՝ Մարտիրոս Սարգսյանին (N 2, 3, 5), մեկը՝ Պ. Մակինցյանին (N 4), հինգը՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին (N 6, 7, 8, 10 և 11) և երեքը՝ Գաբրիել Լևոնյանին (N 12, 13, 14), արտացոլում են հանրահռչակ բանաստեղծի վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ, նրա սերունդի պատկերացումները ժողովրդի և վերաշինվող հայրենիքի հետ:

Հազարավոր կիրմետրերով հայրենիքից հեռու գտնվելով, Իսահակյանը ուշի-ուշու՜ հետևում էր այնտեղ զարգացող քաղաքական իրադարձությունների ընթացքին, աշխատում էր ճշմարտությունն իմանալ Սովետական Հայաստանի մասին և ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրադրության մեջ: Հոգեկան ճգնաժամի և հակասությունների, հույսի և հուսալքության պահեր ապրելով հանդերձ, Իսահակյանն ի վերջո գտնում է ճշմարիտ ուղին՝ Նախ և առաջ նա իր համար պարզում է քաղաքական կողմնորոշման խնդիրը, և 1921 թ. հուլիսի 1-ին Հովհ. Թումանյանին հասցեագրած նամակում հանդում այն եզրակացություն, թե՛ «Քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում (նկատի ունի եվրոպական կառավարությունները—Լ. Ի.)» պետք է երես դարձնել այս ավազակներից, և մասնաճյուղի Ռուսաստանին... Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մի փոքր ավելի ուշ, 1924 թ. նոյեմբերի 12-ին մ. Սարգսյանին ուղղած նամակում Իսահակյանը գրում է. «Ռուսական մի կարմիր զինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Լեզկերի Լիդա, 1000 Մակ-դոնալդ ու Հերիո՝ սա բացարձակ ճշմարտություն է»:

Հայրենիք վերադառնալու պաշտպանը, որ միշտ եղել է օտար ամերում զեղերող հայրենական բանաստեղծի փայփայած իղձը, նրա համար դառնում է կենսական խնդիր՝ Հովհ. Թումանյանի նամակից («Լերի՛, Լվո ջան...») և Մ. Սարգսյանի ու Ե. Չարենցի հետ Վենետիկում հանդիպելուց հետո (1924—1925 թթ.):

Հայրենիքից ստացած, բանավոր թե գրավոր, ամեն մի լավ լուր Իսահակյանին մեծ հրաշքներ էր պատճառում: «Լեմեն բան լավ է գնում Հայաստանում,— գրում է նա Մ. Սարգսյանին.— Երևանից եկած թերթերը կարդում եմ: Մեծ ուշադրությամբ և սիրով նա կարդում է սովետահայ մամուլը, գրականությունը, քաղաքականի խոսք է ասում երիտասարդ գրական ուժերի ստեղծագործական հաջողությունների առթիվ: 1926 թ. Իսահակյանը կատարում է իր առաջին սյցր Սովետական Հայաստան: Մոտիկից Նա տեսնում, ուսումնասիրում է վերածնված հայրենիքի առօրյան, անտեսական ու կուլտուրական վերելքը և այդ ամենի մասին պատմում հա-

բազատներին դրած իր նամակներում: Դրանցից մեկում, հաղորդելով երկրաշարժից ավերված ձևինականի վերաշինման համար միութենական կառավարության ցույց տված օգնության մասին, Իսահակյանը գրում է. «Թող սա ամբողջ աշխարհը լսե և բմբռնե, թե հայ ժողովուրդը ինչ մեծ և իրական բարեկամ ունի իր կոնակին կանգնած»: «Սարի պես մեջքիդ կանգնած յար ունես»,— ավելացնում է նա՝ հայրենիքի ապահով ապագայի նկատմամբ իր խինդը արտահայտելով ավագ գրչակից բնկերոջ՝ Հովհ. Թումանյանի հայտնի պոեմի հմայիչ տողերով:

Սովետական Հայաստան կատարած իր առաջին այցի ժամանակաշրջանում (1926—1930 թթ.) Երևանից Փարիզ գրված նամակները տողորված են ոգևորությամբ, լավատեսությամբ՝ հարազատ ժողովրդի ապագայի նկատմամբ: Տասնհինգ տարվա տարագրությունից հետո հայրենիք վերադառնալով, բանաստեղծը հոգևպես վերակենդանանում է, ստանում ստեղծագործական նոր լիցք ու ավյուն: Նոր շրջափուլ է սկսվում նրա դրական-ստեղծագործական կյանքում:

«Հայրենիքից գուրս չկա կյանք և բախտավորություն»,— ահա Իսահակյանի նամակների լեյտոմոտիվը, որը և նրա կյանքի ու ստեղծագործության նշանաբանն է եղել:

Ավ. Իսահակյանի այս նամակները տպագրվում են առաջին անգամ, աննշան հապավումներով: Նամակների բնագրերը գտնվում են՝ Գրականության և արվեստի թանգարանում (N° 1-ը՝ Հ. Թումանյանի ֆոնդում, N°N° 12, 13 և 14-ը՝ Կ. Լևոնյանի ֆոնդում), Մ. Սարյանի անձնական արխիվում (N°N° 2, 3 և 5-ը) և Ավ. Իսահակյանի անձնական արխիվում (N°N° 6, 7, 8, 10 և 11-ը):

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1 հուլիսի, 1921, Վենետիկ

Սիրելի Օհաննես.

Շտապում եմ մի քանի տող գրել, որ հանձնեմ գրաբերիս...

Ես երեք ամիս է՝ Վենետիկ եմ ապրում, իբրև էժան երկիր, և մանավանդ՝ Ս. Ղազարի գրադարանից օգտվելու, և հենց որ հարմար եղավ՝ Կովկաս դառնալու:

Ինձ թվում է, որ այժմ Կովկասի վիճակը ավելի լավ պիտի լինի, քան անցյալ տարի, մանավանդ՝ թշվառ Հայաստանի. դոնե հիմա դրությունը կայուն է. այլևս կոիվ չկա զանազան ցեղերի մեջ, և թվում է, թե՝ արտաքին վտանգը անցած է. ուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները:

Ես ինքս ազդային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ հավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. Եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է՝ հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ փաստերի վրա. ինձ համար Անդլիան և Ֆրանսիան այնքան դաժան դտնվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից, և մոտենալ Ռուսաստանին... Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան է:

Մնում է հիմա, որ ուսաների և մեր միջև ծագած թյուրիմացությունները հարթել... և ապա լծվել կուլտուրական աշխատանքի. ես սպասում եմ այդ ժամին. ես զենքի, կովի մարդ չեմ, և ոչ էլ ջահել եմ դրա համար, ուստի խրնդրում եմ, ինձ հայտնես, եթե հարմար ժամանակ է, կանչի՛ր, ես կգամ, կվերադառնամ, իսկ եթե դեռ կոիվ, ատելություն, չարություն կա, ես չեմ վերադառնա:

Ջերմ համբույրներով ու կարոտներով քեզ, ընտանիքիդ և բոլոր մեր լավ բարեկամներին ու ընկերներին:

Քո ԱՎԵՏԻՔ

Հասցեն՝ Ս. Ղազարի վանքը:

2. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

12 նոյեմբերի, 1924, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս².

Երկու նամակ եմ գրել քեզ, որով հայտնել եմ քեզնից ստացած նամակները և փողը: Գնումները կատարել էի, և ուղարկելու մասին հարցուփորձից պարզվեց, որ ավելի ապահով ճամբան է տեղ հասցնելու համար մարդու միջոցով ուղարկել (թեև դու էլ էիր մարդ և տղամարդ միևնույն ժամանակ, բայց կորցրիր). ուստի ես էլ որոշեցի ուղարկել մարդու միջոցով (այս անգամ կնիկ մարդու միջոցով, մտածելով. որ սրանք ավելի աչքաբաց են նյութեղենի նկատմամբ, և ավելի գործնական). ուղարկեցի սիկին Մարտիրոսյանի հետ, Շիրակի ջրանցքի ինժեների (կնոջ), ճանաչում ես նրան: 24 պատճեն է նկարներից, 3 կատալոգ, և 4 ալբոմ Վենետիկի. 2 քննադատական թերթիկներ, իմը և մի ուրիշինը, և 2 հատ մեր լուսանկարներից: Հույս ունեմ, որ կհասնին. եթե չհասան, այս անգամ նորից կառնեմ, և ես կբերեմ հետս:

Իսկ ես մտածում եմ դարնանք գալ. մենակ. կինս չի ուզում տեղից շարժվել...

Մոռացա ասել, որ տիկ. Մարտիրոսյանը 4—5 օր է, որ մեկնել է, Մոսկվայի վրայով:

Աշունը գալուց ի վեր սկսել եմ պարապել. ամառը անկարելի էր բան շինել...

Մարտիրոս ջան, մի պատիկ խնդիր ունեմ. եղբորս տղան՝ Աբաս Իսահակյան, ուսանում է համալսարանում, նրան նամակ եմ գրել, բայց պատասխան չունեմ. բարի եղիր Վահան Թոթովենցի³ միջոցով իմանալ, թե նա այս տարի ես ուսանում է, թե ոչ, և եթե Երևան է, տեսնեիր նրան, խրախուսեիր, տրնտեսականի մասին հարցնեիր և ինձ գրեիր, և իրան էլ ասեիր, որ գրեր: Հավատացած եմ, որ կկատարես:

Ուրիշ ի՞նչ գրեմ. տրամադրությունս գեշ չէ. շատ ուրախ եմ, որ Ֆրանսիան ճանաչեց սովիետները. Ռուսիան կուժեղանա և թշնամիների աչքը կհանե:

Շատ ուրախ եմ նույնպես, որ հայերից մասնակցող շեղավ վրացիների ավանտյուրային⁴. ռուսական մի կարմիր գինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է:

Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ). միայն մի բան է գեշ—ուղղադրությունը, աշխատեցեք փոխել...

Կարդացի Ս. Զորյանի «Յանկապատից»⁵ մի երկու պատմվածք. լավ բաներ են. իրական, ճշմարիտ: Ափսոս լրիվ ձեռքս չընկավ Թոթովենցի Սեղբորս⁶. Ինչու վանքը չուղարկեցին. շատ կխնդրեի իմ անունով ուղարկեիք վանքին հանձնելու համար (որպեսզի առաջ ես կարդամ) հետևյալ գրքերը. Դերենիկի «Քաջ նազարը»⁷, 2) «Սեղբորս», 3) Զորյանի «Տխուր մարդիկ»⁸, 4) «Կարմիր արև» դասագրքերը և այլն. ասա ուր որ տեղն է, որ ուղարկեն:

Դու ո՞նց ես, կինդ, երեխաներդ, բարեկամներդ... դրի՛ր մանրամասն: Այստեղ էր նկարիչ Կոնչալովսկին⁹. լավ տպավորություն թողեց, իբրև մարդ: Քո մասին խոսում էր սիրով: Տերնովեցը¹⁰ մոտ օրերս գոցելու է ցուցահանդեսը և Մոսկվա գնալու...

Բարեկամ են կինս և Վիդենը կնոջդ, երեխաներիդ և քեզ: Իսկ ես ճամբորդում եմ բոլորիդ:

Միշտ քո՝ ԱՎԵՏԻՔ

3. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

22 ապրիլի. 1925, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Շատ ժամանակ է, որ նամակդ ստացել եմ, բայց, ներող եղիր, սիրելիս, որ մինչև այսօր չեմ պատասխանել. տխուր եմ շատ, սրտաբեկ, անտրամադիր. այսպես գնաց մեր սերունդի կյանքը...



Ավ. Իսահակյան. Փարիզ, 1933 թ.:

Տպագրվում է առաջին անգամ:

Վերջապես այսօր գրում եմ քեզ. երեանք ծաղկել է հիմա, դուցե կեռասը հասել, Արարատյան դաշտը կանաչին է տալիս. լեռներից իջնում են գարնան հորդ ջրերը, և Աղեքսանդր Մյասնիկյանը չկա¹². նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը...

Ամենաանկեղծ գզացումով ցավում եմ նրա կորուստը. նա ամեն հայի սրտի մեջն էր ապրում, և հիմա ամենքը ողբում են նրան: Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում. ո՞վ պիտի փոխարինե նրան. դա է նույնպես շատ մտածել տալիս ինձ...

Ափսոս, անհուն ափսոս. ի՞նչ կարճ կյանք ունեցավ և ի՞նչ մեծ գործ կատարեց:

Անձնապես ցավ եմ զգում, որ Հայաստան գալով, երջանկությունը չպիտի ունենամ նրան տեսնելու. իմ միակ մեծ բարեկամ-ընկերն էր նա ներկա իրավակարգի մեջ. մյուսները, բացի Մակինցյանից¹³, անժանոթ մարդիկ են ինձ:

Համոզվում եմ, որ հայ ժողովուրդը անբախտ աստղի տակ է ծնվել. գոնե խնայե, ով որ խնայելու է նրա աղնիվ ընկերներին. հույս ունեմ, որ կան. գոնե Լուկաշինի¹⁴ մասին շատ լավ են խոսում. այդ լավ ընկերները թո՛ղ ապրեն: հայրենիքի համար...

Սիրելի Մարտիրոս. մարտ ամսին այստեղ էր Ե. Չարենցը¹⁵. ամեն օր միասին էինք. շատ քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով. նրա մասին շատ գեշ, շար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է: Երիտասարդական տարիքի պատճառով թերություններ ունի—մեծամիտ է, երես տված է և անհանդուրժող է. սակայն խեղճը շատ ջղային է. հիվանդ տղա է ուղղակի. անշուշտ տարիների մեջ այս ամենը կանցնի: Առաջին շրջանի գրվածքները նրա կարդացի. գեղեցիկ բաներ են. տաղանդավոր է, բայց ֆուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել. երևի հին մարդ եմ և չեմ հասկանում:

Տարիքից ավելի դարդացում ունի և կարդացած ու կարդալ սիրող տղա է. շատ հառաջ կզնա:

Սիրելիս, ստացել եմ Մուսկյանի¹⁶ ղրկած «Արևները» և Ս. Զորյանի «Տխուր մարդիկը»: Շնորհակալություններս անպատճառ հայտնիք նրանց, շնորհակալ:

Զորյանը շատ լավ բաներ ունի—պարզ, ճշմարիտ: Ուրախ եմ, որ դեռ երիտասարդ է և հառաջ գնալու ժամանակ ունի:

Ի՞նչ ես անում դու. աշխատո՞ւմ ես, թե կոտրված ես. ինչպե՞ս են կինդ ու երեխաներդ: Ինչպե՞ս է նրանի տնտեսական դրությունը, ժողովրդի ապրուստը:

Շատ բարենեղ-բոլոր քո և իմ լավ բարեկամներին և ընկերներին. հատկապես բարևիր Դերենիկին—Իեմիրճյան. ասա իրան, որ ամեն օր կարոտով անունը տալիս եմ նրա, բայց չեմ գրում, որովհետև՝ եթե գրեմ, մի ողջ գիրք պիտի գրեմ, այնքան բաներ ունիմ նրան ասելու. 14 տարվա մեջ սրտիս մեջ հավաքված բաներ—ինչպես գրեմ նամակով. երբ աստված կամենա իրար տեսության արժանանանք, ամիսներ պիտի խոսենք, որ վերջ ունենա...

Մերոնք լավ են. բարեկամ են սիրով քեզ և ձերոնց:

Իսկ ես ջերմ բարեկամով տիկ. Լուսիկիդ¹⁷, համբուրում եմ քեզ, երեխաներիդ և Դերենիկին:

Միշտ քո՝

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

4. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ

Վենետիկ, 29 մայիսի, 1926

Սիրելի Պողոս.

Ստացա նամակդ: Ստացել եմ ուղարկած թերթերը. եթե կուզես, քեզ ճամբեմ, կամ վանքին տամ:

«Նորքը» կարդացի. վանքը ունի. բայց եթե քեզ հարկավոր չէ, ուղարկիր ինձ, ես կպահեմ Չարենցի գրածի համար¹⁸:

Չարենցի գրությունը լավն էր, մանավանդ սկիզբը. բայց շա՛տ երկարացել է, և տալտալոգիա է դուրս եկել. անվերջ կրկնություններ: Եվ մի տեսակ սինթեզ է իր գաղափարների: Մյուս կողմից էլ, ես և նա, հինն ու նորը, սիմբոլներ են դարձել. ամբողջ հին մտայնությունը իմ վրա է կուտակել: Բայց և այնպես տաղանդավոր տեղեր շա՛տ կան: Շատ գեղեցիկ էր Դերենիկի «Կովի դաշտում»¹⁹. ոճը—հատու, որոշ. ճշմարիտ դիտողություններով: Սակայն վերջը թույլ էր—«էյի» հոգեբանությունը, մտածումները. մեռնողը առանց ցավի, տանջանքի մեռնում է փիլիսոփայելով: Ծիշտ չէ...

Ակսել Բակունցը վարպետ գրիչ է. ռեալիստ, դիտող, բայց սլատմվածքը²⁰ ծայրե ծայր կրկնությունն էր Գոգոլի «Հին սլովենշիկներին» հայտնի կտորի. դու երևի լավ պիտի հիշես. այն ծեր մարդն ու կինը. մյուրաբաները, կնոջ մահը, մարդու մահը: Հար և նման: Մյուս բաները չկարդացի: Ժամանակ չունեցա:

Հավ կլինի, որ դուք գայիք մի քանի օրով, նկարչական ցուցահանդեսը տեսնելու. բայց հառաջիկա շաբթուն—ո՛չ. ես բացակա եմ մի քանի օրով: Հունիսի 6-ից Վենետիկ եմ...

Ուրիշ ի՞նչ գրեմ: Ուշացավ վիզաս. գոնե սեպտեմբերից հայրենիք լինեմ, բաղերի քաղցրությունը վայելեմ:

Կինս ջերմապես բարևում է Սերարին²¹, քեզ և աղջկանդ սլաշում, այդ շնորհին ես էլ եմ մասնակցում: Համբույրներով քո Ալետիք:

5. ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐՅԱՆԻՆ

Վենետիկ, 3 օգոստոսի, 1926

Սիրելի Մարտիրոս.

Շատ ուրախացա, որ Փարիզ ես եկել²²: Հավ ես արել, շա՛տ կօգտվիս: Փափագելի է, որ մեր նոր և նույնպես հին մտավոր գործիչները հնար ունենան երբեմն Եվրոպան տեսնել—նկարիչներ, քանդակողներ, գրողներ, դերասաններ, և այլն:

Մյուս կողմից էլ ցավում եմ, որ քեզ պիտի Երևանում չգտնեմ: Տեղափոխություն: Ոմանք գալիս են, ոմանք գնում: Վերջիվերջո, մղված միմիայն հայրենիքի կարոտից, վճռեցի գնալ, տեսնել հայրենիքը: Ականջով հաղար ու մի հակասող բաներ եմ լսել և ոչ մեկին էլ չեմ հավատացել, և ինչպես հավատալ, երբ իրար ջնջում են ասածները: Լինել Թովմաս առաքյալ²³: Տեսնել, շոշափել և ոչ թե հավատով խաբել կամ խաբվել:

Իմ գնալը, անձնապես, շա՛տ դժվարությունների հետ է կապված: Կինս չի ուզում գալ, և տղաս էլ դեռ պիտի սովորի, այսպիսով իմ վերադարձը լիովին չեղավ. առայժմ այսպես: Կգնամ, որոշ ժամանակ կմնամ, հետո կգամ և ամբողջապես կտեղափոխվեմ:

Իմ տնտեսական դրությունս ասպահով էր, բայց գնալովս խախտվում է նա, և եթե չիրականանա կառավարության խոստումը թե որոշումը, ասլա, ուրեմն, գործած քայլս հիմարությունից ավել մի բան կլինի:

Հույս ունեմ, որ այդպես չի լինելու:

Դու մենա՞կ ես եկել, թե՞ ընտանիքով: Թվում է. թե չալիտի կարողանայիր ընտանիքով դալ. թերևս տիկին Լուսիկը հետդ լինի, երեսաններ՝ մայրիկիդ մոտ:

Ես որ Փարիզ էի, լսեցի զալուզ մասին, որ գրեթե մի տարվա չափ մնալու էս:

Շուտով կգնամ էս. երեկ նամակ առա Պողոսից, որ հրամանն էկել է: Վերջապես, 5 ամիս սպասելուց հետո:

Սիրելի Մարտիրոս, խնդրում եմ գրես, թե երկաթուղու տոմսը Բեռլինից Մոսկվա, Մոսկվայից Թիֆլիս, II կլաս, ինչ արժենա, դոլլարի հաշվով: Ուզում եմ Մոսկվայով գնալ²⁴: Շատ է հետաքրքիր ողջ Ռուսիան անցնել, զգալ, տեսնել իրերի ներկայությունը, առարկայությունը:

Եվ՝ քանի՞ տեղ վիզա է պետք: Եթե դու մոռացել ես, ղեսպանատնից կարող ես իմանալ. այդտեղ դիտցողներ շատ կան:

Ուրիշ ինչպե՞ս ես, ինչպե՞ս է առողջությունդ, քեֆդ, բնտանիքդ, և վերջապես երեանը, մեր ընդհանուր բարեկամ-ընկեր-ծանոթները:

Ասում ես, որ Փարիզ գամ: Սիրելի՛ս, այս տարի մոտ երկու ամիս մնացի՜ր Բավ է:

Կինս ու տղաս շատ բարեկամ են քեզ:

Իմ կողմից ջերմ բարևներս հայտնիր Սիմոնիկին²⁵ և տիկնոջը, Չուբարին²⁶ և տիկնոջը, կամ, ավելի քաղաքավարի լինելու համար՝ տիկին Չուբարին և Չուբարին:

Համբույրներով քո՝
ԱՎԷՏԻՔ

Հ. Գ. Քանի՞ օրվա ճանապարհ է Բեռլինից Մոսկվա և Մոսկվայից Թիֆլիս: Այս էլ շմոռանաս գրել:

6. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԿԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

12 հոկտեմբերի, 1926, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիկեն ջա՛ն.

Վերջապես երևանումն եմ: Ես ինձ շատ բախտավոր պիտի զգայի, եթե չիմանայի այն ծանր հարվածները, որ հասել են մեր բնտանիքին: Թիֆլիսում իմացա, որ Ալեքսան Եղբայրս մեռել է ապրիլ ամսում: Մեռել է և՛ տերտերանց Գևորգը²⁷, Վիգոն (Արալի աղջիկը)²⁸ և շատ շատերը մեր բարեկամներից և իմ ընկերներից...

Հանգիստ հասա Բաթում. լավ ընդունեցին: Մի երկու օր մնալուց հետո գնացի Թիֆլիս. ընդունելությունը սրտազին էր և անկեղծ: Ժաշեր, ընդունելություններ: Սկզբում հյուրանոց իջա, բայց հովհ. Թումանյանի բնտանիքը չթողեց զուրսը մնայի. տարան իրենց տունը: Կավ են նրանք: Աշխենը, Նվարդը. Սեդան և Թամարան²⁹ երևանումն են ապրում: Տանն էր Մուշեղը, Համլիկը³⁰, որ ամուսնացել է, Անուշը և Արփիկը³¹: Օլյան³² շատ չի ծերացել: Նրանց մոտ իմ տանս էի զգում: Քնում էի Օհաննեսի սենյակում:

Շատ բարեկամներ տեսա. ուրախացա և տխրեցի. այդ է կյանքը:

Երեան Եկա Դիլիջանով և Սևանով, Սիմոնիկ Փիրումյանի հետ, օտոմոբիլով: Հրաշալի ճանապարհ էր. պայծառ, տաք, գեղեցիկ: Տեսա խորհրդային Հայաստանի շինությունները, պանրագործարանը. հրաշալի էր: Երեանը շատ է փոխված, եռուղեո, կենդանի, բաղամամարդ: Անվերջ քանդում են ու շինում.

մեծ աշխատանք են թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը. ասլրելու ընդունակ. լալիս է, բայց նորից շինում ու ստեղծում, քարից հաց հանում:

Ավելորդ է խոսել իմ մասին: Ամեն տեղ գրկարաց ընդունելություն: Բայց սիրտս կոտրված է:

Հենինական դեռ չեմ մտել. ո՞ւմ դնամ տեսնիմ. բայց, իհարկե, պիտի գնամ: Սակայն դեռ նրեանում շատ պիտի մնամ. վաղը դնում եմ շրջակաները, օտոմոբիլով. հետո՝ էջմիածին: Նղանակները շատ լավ են. տաք, սլայծառ: Հրաշալի ջուր ունի նրեանը, և մրդեր, պտուղներ:

Ասլրում եմ հոտելում. սենյակ պիտի ստանամ մոտ ասլագայում:

Շատ շատերը բարեկամ են քեզ...

Բոլորը գտնում են, որ ես լավ եմ մնացել, ինչպես և դու: Վիզենով³³ հիանում են:

Սովի վրայից քեզ նամակ գրեցի. բաթումից հեռագրեցի: Նամակ չէի գրում, որովհետև ժամանակ չուների, և սիրտ միևնույն անգամ: Ստացա՞ր դրած նամակը:

Մեր ծանոթները, բարեկամները, բնկերները բոլորն էլ խեղճ վիճակի մեջ են. գրեթե ամբողջ ժողովուրդը խեղճ է. աղքատ, քանդված, ավերված, թալանված երկիր է եղել, դարհուրանքներ տեսել, անհուն, անսահման: Հիմա նորնոր է ոտքի կանգնում. տեսնում ես այս բոլորը և սիրտդ կտոր-կտոր է լինում. սլզում ես հոգիդ տալ նրանց, այնքան խղճում ես: Խեղճ, անբախտ հայ ժողովուրդ, գնացել է մահի դուռը ամբողջովին, և կիսով՝ մերկ ու քաղցած, դարհուրած հետ է դարձել: Եթե Ռուսաստանը հասներ 1921 թվին, ջնջված էր հայությունը: Հիմա կուշտ են, սով չկա: Բայց բնակարանի մեծ կրիդիս կա. թափված են իրար վրա, բառիս բուն նշանակությամբ: Անվերջ շինում են տներ. բայց ծով կարիքին հասնել կարելի չէ. նվրոսլայի հայությունը պիտի օգնե, շատ օգնե, եթե սիրում է նա հային ու հայ լեզուն: Ամբողջ քաղաքը լծված է աշխատանքի: Կառավարության գլուխ կանգնածները ընտիր, խելոք երիտասարդներ են (մոտ 40 տարեկան մարդիկ), աշխատող, եռուն, եռանդով, դարպասած: Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը: Գլուխները կախ աշխատում են, համբերանքով և հույսով: Անշուշտ, մի 10 տարի հետո, Հայաստանը, եթե ունենա խաղաղություն և աջակցություն դրսից, շատ գեղեցիկ, լավ երկիր է լինելու: Հիմքերը լավ են դրված: Նրանի՛ երիտասարդ լինելի և ընկնելի գործի, սե, շարքաշ գործի ծովում: Թո՛ղ Վիզենս իմ տեղը կատարե իմ ուղածս ու չկարողացածը...

Էլ ի՞նչ գրեմ: Գերենիկին տեսա, դժբախտ է, մի հիվանդ երեխա ունի: Սնարը³⁴ ամուսնացել է դերասան Արելյանի աղջկա հետ: Հիմա մի աղջիկ ունի: Սիմոն Հակոբյանին³⁵ դեռ չեմ տեսել, մի տղա ունի:

Սիսակը³⁶ լավ է, զվարթ ու ազնիվ գործող: Շիրվանզադեին դեռ չեմ տեսել:

Ով որ ճանաչում է քեզ, բարեկամ է...

Գրիր Վիզենի մասին. ի՞նչ եղան փոխությունները, հաջող տվե՞ց: Ասա, որ լավ աշխատե, որ ասլագայում հաց ունենա: Իր հասակի տղաները հա՛մ աշխատում են, հա՛մ սովորում...

Ռուբեն ախպերը³⁷ շատ հիվանդ է եղել. հիմա լավ է: Տերտերը³⁸ պարսիչ է բնկել. խեղճ մարդ: Մնացածները լավ են...

ներ հանգստանամ, նամակ կգրեմ վաճառք, և ում որ խոստացել եմ:

Գարեգին Լեոնյանը, Միշա Մանվելյանը, Մամիկոն Գեորգյանը³⁹, ամենը շավ են ու բարևում են:

Մտադիր եմ ձմեռը Մոսկվա գնամ. ձերոնց դեռ նամակ չեմ գրել, կգրեմ: Ժամանակ չունեմ, անվերջ տեսակցություններ, խոսք ու ճաշ: Եվ երբեք մե- նակ չեմ գտնվում...

Թիֆլիս չկարողացա շատ մարդ տեսնել, բո և իմ բարեկամներից: Ժա- մանակ չկար:

Համրույրներով թեզ և Վիգենին,
ԲՈ ԱՎԵՏԻՔ

7. ՍՈՑՅԱԼ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

27 փետրվարի, 1927, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Փետրվարի 9-ին գրածդ նամակը երեկ ստացա: Լենինական էի գնացել, երեկ վերադարձա: Զրադացի դորժերով. պետք է բոլորովին նորը շինենք, կա- ռավարությունը փող պիտի տա երկար տարիներով և չնչին տոկոսով, այնպես որ մեր քաղաքը պիտի շինվի՝ ունենալով և՛ կանալիզացիա, և՛ ամեն տու- ջուր: Հայաստանի ամենալավ քաղաքը պիտի դառնա մի 3—4 տարվա ընթաց- քում: Փող կա. Խորհրդային Միությունը որոշել է տալ 16 միլիոն ռուբլի⁴⁰, թող սա ամբողջ աշխարհը լսե և ըմբռնե, թե հայ ժողովուրդը ի՞նչ մեծ և իրա- կան բարեկամ ունի իր կոնակին կանգնած. «Սարի պես մեջքիդ կանգնած յար ունես»: Ես շա՛տ գրադված եմ: Այս ամսիս երկու գիրք պիտի լույս տեսնեն⁴¹: Պողոսին ասա, որ մոտ օրերս իրեն թե՛ նամակ կգրեմ, թե՛ նյութ կուղարկեմ: Իմացիր, որ Պողոսը թեև խելառ է, բայց մեր ամենաազիլ բարեկամն է, ըն- Պերն՝ գաղափարի բուն իմաստով: Մոտ օրերս քեզ էլ, Վիգենին էլ, Վանքին էլ և բոլորին էլ նամակներ կգրեմ: Տրամադրությունս հիմա լավ է. վշտերին հաղ- թեցի: Առողջ եմ: Ամեն տեղ ընդունված և սիրված: Գալու մասին դեռ չեմ մտածում, որովհետև դորժեր ունեմ. երկիրը դարնանը պիտի տեսնեմ: Տխուր բաներ շատ կան, իհարկե, բայց ընդհանուր գումարը շա՛տ լավ է և պայծառ: Խորհրդային կարգերին ուրիշ կարգեր չեն կարող փոխարինել. միակ հնարա- վոր լավ դրությունը սա՛ է, և հայերիս համար ամենանպաստավորը: Այս խոս- քերս ամեն տեղ կարող էս ասել և ամեն մարդու ցույց տալ...

Համրույրներ ու բարևներ Պողոսին, Սերարին, Բալիկին, Ադոնցին⁴²: Զերմ բարևներ Ս. Փիրումյանին. Ե. Զուրարին և Ե. Քոչարին⁴³ ու Գարոյին⁴⁴:

Համրույրներով՝ ԲՈ ԱՎԵՏԻՔ

8. ՍՈՑՅԱԼ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

3 սեպտեմբերի, 1927, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջապես ստացա ձեր նամակները: Երկար ժամանակ է, նամակ չունեի և շա՛տ էի տանջվում: Դրա համար էլ հեռադրներ տվի: Քո պատասխանը հե- ռագրով մինչև երս տակավին չստացա, բայց սիրելի Գեղամը⁴⁵ հեռագրեց և վերջիվերջ հանգոստացա:

Ես թեև Երևան էի, բայց շարունակ, կարճ միջոցներով թափառում էի՝ երկիրը և ժողովուրդը տեսնելու համար: Հիմա այլևս Երևանումն եմ և սկսում եմ պարապել...

Ինչ վերաբերվում է իմ Եվրոպա վերադարձին, դրա մասին մտածում եմ. նախ որ ձեզ տեսնեմ և վերջնականապես որոշեմ, կարգի դնեմ ամեն բան, հետո ձեռադրներս և գրքերս հավաքեմ ու բերեմ Հայաստան: Բայց գալս իսկույն չի հաջողվի. նախ, որ վիզաների հարց կա. այստեղից արգելք չկա, միայն կուշանա, բայց Ֆրանսիան էլ պիտի վիզա տա. այդ մասին դու պիտի աշխատես՝ վիզա առնել, իսկ եթե Իտալիա ես գնում, իտալական վիզա պիտի ձեռք բերես:

Ես կարող եմ գալ Եվրոպա կարճ ժամանակի համար. ես չեմ ուզում Եվրոպայում ապրել, որովհետև թե՛ հոգնած եմ Եվրոպական դադթականի կյանքից և թե ի՞նչ միտք հայրենիքից միշտ հեռու լինել: Ես հայրենիքում շատ հարգված եմ ամեն կողմից. երկրի իշխանավորները ինձ սիրում են ու հարգում. ես չեմ կարող այդ կապերը խզել: Բացի այդ, օրեց-օր սիրտս կապվում է երկրի և խորհրդային կարգերի հետ, և տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտավոր դղալ և նպատակահարմար: Ինչքան էլ որ խորհրդային իշխանությունը բացասական կողմեր ունենա (և ունի անշուշտ), բայց և այնպես նրա դրական կողմերը գերակշիռ են, և մեր երկրի ապագան այս կարգերի մեջ՝ և՛ ապահովված, և՛ լավ: Երկրի, այս ամբողջ, թափանցիկ և բնութագրից աղքատ ու չոր երկրում, ամեն անկյունում տեսնում ես նոր իշխանության ստեղծագործ շունչը. անհուն եռանդ է թափվում երկիրը բարձրացնելու տնտեսապես. ջրային աշխատանքները շտեմնված գործեր են նույնիսկ ամբողջ Միության մեջ. քանի՜ կանաչներ են շինել և շինում են. հիդրոկայաններ, որոնց վրա 10—13 միլիոն փող է ծախսվում: Եվ ուրիշ բազմաթիվ շենքեր՝ հիվանդանոց, դպրոց, համալսարանի շենքեր, թատրոն, կայարաններ, ճանապարհներ, գործարաններ և ուրիշ շատ բաներ: Եվ այս ամենը տեսնելով, հրճվում է հոգիդ, և համոզվում ես, որ ներկա իրավակարգը ամենանպաստավորն է մեզ համար, և ուրիշ մի պետականություն չի կարող և միտք էլ չունի փոխարինելու սրան:

Հայերիս գլխին թափված դարհուրանքներից հետո ներկա դրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի չտալ և պիտի պաշտպանել:

Ես այսպես եմ զգում ու մտածում, և այսպես լինելով՝ ես չեմ կարող երկար ժամանակ հեռու լինել Հայաստանից: Եվ ուր էլ որ լինեմ, պիտի պաշտպանեմ այն, լավին լավ ասելով, վատին՝ վատ, ձգտելով իմ ներկայությամբ և իմ խոսքով վատը չեղոքացնել, ուղղել սխալները:

Ես խնդրում եմ շատ բաների ասկանջ մի՛ կախիր. ո՛չ հավատ րնծայե չափազանց դժվարություններին և ո՛չ էլ հավատա շարամիտ քննադատներին. ճշմարտությունը այն է, որ երկրի բախտը ուղիղ ճանապարհի վրա է, և ապագան մխիթարիչ: 5—10 տարվա մեջ չէր կարող մի երեսի վրա լքած երկիր Շվեյցարիա դառնալ, բայց այդ կարճ միջոցում, դու հիմա կարող ես երկրի մի ծայրից մյուս ծայրը գնալ, լեռները բարձրանալ, լինել թուրքերի և քրդերի մեջ — և ամեն տեղ ապահով, անվտանգ: Սա մի երազ է, որ առաջ միայն գիշերները քնի մեջ կարող էիր ունենալ: Դու կարող էիր երևակայել, որ Սևանի վրա ամեն օր նավագնացություն, շոգենավակներ և բոլոր ավերը: Հիմա փաստ է:

Նամակս վերջացնեմ:

Ջերմ բարերի Նիկողային⁴⁶, Գարոյին, Չուրարին և կնոջը, ընկեր Դանուշին⁴⁷, Գեղամին և կնոջը, հայտնելով բոլորին և վերջիններիս սրտաղին շնորհակալություններս: Մակինցյանը, կարծեմ, դեռ Կ. Պոլիս չի գնացել. Աբաս-թուման պիտի լինի:

Երկու գիրք եմ տպում, մեկը շուտով պատրաստ կլինի, մյուսը կտպվի աշնանը: Նրանցից շատ փոքր ստանալիք չունիմ, որովհետև արտատպումներ են. ստանալու եմ 1200 ուրլի: «Արու Լալա Մահարին» ստացել եմ⁴⁸:

Համրույրներ և կարոտալի բարեկեր
բեզ և Վիգենին, ԱՎԵՏԻԲ

9. ՀԵՌԱԳԻՐ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ

2/VI 1928 թ.

Italia Sorrento
Maxim Gorky

Творцу ярких, смелых образов, певцу сокола и буревестника, прекрасному рассказчику и сталисту в день 60-летия его жизни, шлет сердечные поздравления Армянское литературное общество.

ԱՎԵՏԻԿ ԻՍԱԱԿՅԱՆ

10. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

13 ապրիլի, 1929, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վաղուց է ձեզնից նամակ չունիմ: Վերջին նամակդ գրված է մարտի 1-ին. ինչու էք լռել, ի՞նչ կա:

Այս երկու-երեք օր է, որ ես երեանումն եմ: Հենինականից գրել եմ ձեզ նամակ, երևի, ստացար:

Երեկ մեր նախագահը՝ Սահակ ՏԵՐ-ԲԱՐՐԻԵԼՅԱՆԸ⁴⁹, հեռադրով Փարիզ մեր ղեկավանատան վրա՝ կարգադրեց ձեզ տալ 150 դոլլար, եթե դեռ չեա ստացել, գնա ստացիր: Մարտին ուղարկել եմ ձեզ 30 դոլլար, մոտ օրերս էլ կուղարկեմ նույնչափ:

Ես վիզա կստանամ Փարիզ դալու համար մայիսի սկզբներին. այդ ժամանակ միայն հնարավոր է, որովհետև կառավարությունը շատ վրադրված է նոր բնարություններում: Հարցը լուծված է վերջնականապես, մնում է տեխնիկական կողմը: Հունիսի սկզբներին կլինեմ Փարիզ: Հիմա հանգիստ սրտով Վիգենը կպարապի, և դու էլ չես ջղայնանա:

Դու մի՛ լսիր դաշնակցական թերթերին. նրանք իրենց քաղաքական հաշիվներն ունեն և ուզում են իմ գեղարվեստագործելը⁵⁰:

Ես Հայաստանին, նրա ժողովրդին և նրա կառավարությանը բարեկամ եմ, և վերջին հաշվով նրանց հետ եմ: Արդեն դրանցից դուրս էլ ոչինչ չունենք, որով ասորենք ու ոգեորվենք: Դրանցից դուրս մենք՝ հայերս, կլինենք մի թափառական և արհամարհված ազգ:

ես շատ եմ կապված մեր երկրի հետ և դժվար թե երկար կարողանամ հայրենիքից դուրս ասլրել: Սակայն առանց ձեզ էլ անտանելի դժվար է մենակ, անընտանիք ասլրել. այս հարցը պիտի լուծել: Նրեի, Վիգենին կթողնենք մինչև համալսարանն ավարտելը մենակ Փարիզում, մի լավ ընտանիքում, իսկ մենք կվերադառնանք և ընդմիջտ կտեղափոխվենք Նրեանում:

Այստեղ լավ շրջան ունիմ. մեր ինտելիգենցիան Նրեան է հավաքված: Գարունն ու աշունը շատ դեղեցիկ են Նրեանում. ամառները դուրս կղանք իսկ ձմեռը, եթե լավ բնակարան ձեռք բերենք, նույնպես լավ կանցնի: Փարիզ կգամ Մոսկվայով, կմնամ այնտեղ մի քանի օր, և մի քանի օր էլ Բեռլին: Բեռլին թողած գրադարանս կմաքրեմ և լավ գրքերը կամ կտեղափոխեմ Նրեան կամ պահ կտամ՝ մինչև դրությունս որոշելու:

Վերջացնում եմ նամակս: Շատ բարեններ մեր լավ բարեկամներին...

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենին՝ ԱՎԵՏԻՔ

11. ՍՈՖԻԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱՅԱՆՆԵՐԻՆ

10 հունիսի, 1929, Նրեան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Տեսնում եք, որ դեռ Նրեանումն եմ: Գալս ուշացավ բոլորովին կողմնակի պատճառներով: Նրեան հյուր եկան Ադրբեջանի և Վրաստանի գրողները՝ բանաստեղծներ և վիպասաններ, 40 հոգի, թե՛ ծանոթանալու Հայաստանի հետ և թե՛ բարեկամական-բնակարանական դաշինքներ կնքելու Հայաստանի գրողների հետ: Մի շարքի է նրանցով ենք զբաղված՝ դիմավորելով նրանց մինչև Ղարաբաղի սահմաններով, Սևանի վրայով: Պատեցրեցինք նրանց մեր երկրի մի քանի վայրեր. ժողովներ, ընդունելություններ, հանդեսներ, ճաշեր: Այսօր մենք՝ հայ գրողներս մոտ 17 հոգով, նրանց հետ գնում ենք Լենինական, այնտեղից էլ Վրաստան և ապա Ադրբեջան: Այս կտևեմ մի 15 օր, հետո կվերադառնանք նորից Նրեան²:

Շատ ուրախ և բովանդակալից օրեր ենք անցկացնում:

Նրեան վերադարձից հետո իմ գալու թղթերը պատրաստ կլինեն, ապա մի քանի օր էլ իմ մնաս-բարեր կտևե, և ճանապարհ կընկնեմ դեպի Մոսկվա:

Վնաս չունի որ մի քիչ կուշանամ. ամեն բան պիտի կարգին լինի: Շատը դնաց, քիչը մնաց: Իմ հարաբերությունները իշխանություն հետ լավ են եղել, բայց այս տարի շատ և շատ լավացել են: Նրանք ինձ հիմա հասկացել են, ամեն թյուրիմացություն պարզվել է և ես նրանցն եմ, նրանք էլ իմը: Այս մասում ես շատ ուրախ եմ: Այլևս պարզ է, որ ես կապված եմ Հայաստանի հետ և նրա իշխանության հետ: Իմ մնալը բարիք եղավ ինձ համար:

Իմ արտասահմանում մնալը կլինի ժամանակավոր, մի տարվա չսփ, և նորից կղանամ Հայաստան ու կհաստատվեմ: Հայրենիքից դուրս չկա կյանք և բխտավորություն:

Հիմա տպում եմ երկու գրքույկ՝ «Աբու-Լալա-Մահարին» և մի քանի պատմավաճառներ⁵³։ Իմ բացակայության ժամանակ կտպվեն բանաստեղծություններս⁵⁵։

Արսենն⁵⁵ Կկավ և տեղեկություններ բերեց ձեզնից։ Շատ ուրախ եմ։

Ուրեմն՝ մի քիչ էլ համբերեցեք, ամեն բան լավ կլինի։

Շատ և շատ բարևներ մեր բոլոր բարեկամներին։

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենիս, ձեր ԱՎԵՏԻՄ

12. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

23 դեկտեմբերի, 1930, Փարիզ

Սիրելի Գարեգին⁵⁶։

Վերջապես քեզնից նամակ ստացա. հասկանալի է, որ շատ ուրախացա՝ նրանից հաղորդած տեղեկությունների մասին. թե ընկերների և թե հասարակական գործերի մասին։ Սիրտս անբաժան կապված է նրանի հետ. միշտ նրա մասին եմ մտածում, և շատ կարոտել եմ նրանին ու ընկերներին։

Տիկինդ ուզել էր մողանների ժուռնալներ. մի շաբաթ առաջ, պատվիրած պակետով, գրավաճառը ուղարկեց քո հասցեին երկու ժուռնալ, վերջին մողայի, դեկտեմբեր ամսին։ Պիտի իմանաս, որ Փարիզում մողան փոխվում է ամիսը մի անգամ։ Պատերազմից առաջ տարին մի անգամ էր մողան, իսկ XIX դարի վերջերին մողան 10 տարին մի անգամ էր. հիմա—ամեն ամիս։ Թուշունի թևով չես կարող հասնել նրան։

Ես լավ եմ, ամբողջ երկու ամիս բժշկվում էի, հիմա չաղար է, նորից պիտի բժշկվիմ, հետո բոլորովին լավ կլինեմ։

Սկսել եմ պարապել, բայց Փարիզում ժամանակը շատ աչազ է թռչում։ Գարծես, մարդ բան չի անում, բայց բանից էլ չի պրծնում։ Մեծ քաղաքը կլանում է։ Անթիվ հետաքրքիր բան կա, և գուցե կորցնում ես։

Հա՛, անցյալ օրը մի բանախոսության մեջ լսեցի, որ Արիաչայ կամ Արաչայ (Շիրակի դետը) չի նշանակում Գարեգետ, այլ Սահմանագետ։ Պարսկերեն արալա կնշանակե սահման⁵⁷։ Թուրքիայի և Պարսկաստանի միջև սահմանագետ։ Հարցրո՛ւ մեր լեզվագետներին և նայիր գրքերի մեջ։ Ես էլ նույնը պիտի անեմ...

Շատ ուրախ եմ, որ հիմա աղատ ժամանակ ունես, և պիտի կարողանաս բոլոր ուժով նվիրվել գրական գործերիդ։ Անհամբեր սպասում եմ Սայաթ-Նովայիդ լույս տեսնելուն⁵⁸։ միայն կուղենայի իմանալ, բնագիրը ամբողջ կա՞⁵⁹։ այն որ հայտնի է մեզ Գ. Հախովերդյանի⁶⁰ տվածով և այն ինչ որ լույս են տեսել զանազան հանդեսների մեջ։

Հետո, աշխատի՛ր բառարանդ՝ վերջացնել. գոնե մի մասը։ Դա շատ կարևոր գործ է։

Այստեղ, առհասարակ, գրական մարդում, աչքի ընկնող մի բան չկա. ծոտի-պոտի բաներ են—չապրված, շինծու բանաստեղծություններ ու պատմավաճառներ. կեղծ ու բոկոկո։ Եվ ուրիշ բան էլ անկարելի կլիներ սպասել—հայրենիքից ու ժողովրդից հեռու ի՞նչ իրական ստեղծագործություն կլինի. մյուս կողմից էլ ֆրանսական գրականությունը ճզմում է ամեն բան։

Նս, հալանական է, եթե արաաքին ու ներքին արգելքներ չծագին, 1931 թվի ընթացքին կվերադառնամ հայրենիք: Փառիզը լավ է, բայց հայրենիքը ամեն տեղից լավ է: Լավագույնն է:

Կնոջս և տղայիս կողմից շատ բարևներ քեզ: Իմ կողմից բարևներ կնոջդ, և բոլոր ընկերներին. Դերենիկին, Միշոյին⁶², Պողոս Արելյանին⁶³, Սիսակին, Յուլակին⁶⁴, Էփրիկյաններին⁶⁵, տ. Ուրարտուին⁶⁶ և ամուսնուն, Արշակ Տոնյանին⁶⁷ և կնոջը, Փանոսին⁶⁸, Կոջոյանին⁶⁹, և այլն, և այլն. բոլորին, բոլորին:

Համբույրներով, քո ԱՎԵՏԻՔ՝

Մեկ-մեկ դրիր, շա՛տ մեծ հաճույք կսպասեմ նամակներովդ:

ԱՎԵՏԻՔ՝

13. ԳԱՐԵՒԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

7 օգոստոսի, 1932, Փարիզ

Շա՛տ սիրելի Գարեգին.

Նամակդ ստացել եմ իր ժամանակին: Իսկույն ուզում էի պատասխանել, բայց հետաձգեցի, և այսպիսով շա՛տ հետաձգվեց: Հետաձգվելու գլխավոր պատճառն այն էր, որ ուզում էի հաստատապես հայտնել, որ նյութ կուղարկեմ ժողովածուի⁷⁰ համար. բայց դեռ մինչև հիմա գլուխ եմ կոտրում և չգիտեմ՝ ինչ գրեմ: Սահմանած նյութին հարմար սյուժե չունիմ. ծանոթ չեմ նոյեմբերյան անց ու դարձերին. ներկա չեմ եղել, չեմ ասել: Զգիտեմ ինչ գրեմ, մոլորվել եմ: Հաղար նյութ է անցնում մտքովս, և ոչ մեկը հարմար չեմ գտնում: Սակայն նորից մտորում եմ: Տեսնենք:

Շա՛տ շնորհակալ եմ ուղարկածդ թանկագին նվերի համար—Սայաթ-Նուվայի: Շա՛տ լավ հրատարակություն է: Լիակատար, սպառնալից և անսխալություն է քո արածը: Հաճույքով կարդացի:

Մակինցյանի գրությունը՝ սարից-ձորից, դեսից-դենից բաներ է. մի տեղ մտքի, թե փաստի, թե բացատրության կոպիտ սխալ կար. բայց դիրքը մոտու չէ, որ ցույց տամ. (մի ընկեր տարավ կարդալու): Ի միջի այլոց «միաստրել» չի նշանակում «խալխի նոքյոր», այլ ուղղակի ծառայող, պաշտոնյա, որից և ծագել է մինիստր բառը: Թերևս Մակինցյանը սխալ չէ, որովհետև ամեն մի պաշտոնյա փրջիվերջո հասարակական նոքար է: Սայաթ-Նուվայի երկրորդ օրինակը ուղարկեցի, ուր որ ուղեցել էիր:

Սիրելիս, ինձ վրա էլ մի մեծ ծուլություն է իջել, կամ ուրիշ խոսքով ասած, ուժերս, ժամանակս կուլ է դնում հասարակական գործերով⁷²: Այստեղ գործող անձեր չունինք, դիրքով, անունով անձեր, որ կանգնած լինին Խորհրդային Հայաստանի կողքին և պաշտպանեն թշնամական հարձակումների դեմ: Այստեղ շա՛տ դործ կա անելու, մեծ պայքար կա մղելու. երիտասարդ, եռանդուն մարդկանց տեղն է: Նս հոգնած եմ, մտքերով ցրված. սակայն ի՞նչ արած պետք է գործել. «ձեռքս ի բան, ոտքս ի գերեզման», ինչպես ասում էին մեր հայրերը: Շա՛տ զրադված եմ արտաքին գործերով, և գրական աշխատանքներս բառացի մտքով ասած՝ երեսի վրա են ընկած: Փարիզն էլ, գիտես, շա՛տ մեծ քաղաք է, վիշապի նման բան է, և սպառում ու կլանում է մարդու օրն ու եռան-

դր: Վայրերը հեռու, խճճված, հոգնեցնող, աղմկալից, քառս: Մի մարդու տես-
նելը, մի տեղ գնալը ամբողջ օրը ուտում է: Եւ միշտ ժողովներ, խմբեր ղեկա-
վարել, արվարձաններ գնալ, հանձնաժողովներ և այլն, և այլն:

Երազս է՝ շուտով Երևան ընկնել, Ընտանիքովս, ունենալ մի-երկու սեն-
յակ և ամփոփվել, սկսել պարապել, ականջս՝ հանգիստ, սիրտս՝ խաղաղ:
Զդիտեմ, Ե՛րբ է այդ իրականանալու: Ի դեպ՝ առողջությունս հիմա բավական
լավ է:

Գարեգին ջան, նամակդ շատ ուրախացրեց ինձ և տեղափոխեց Երևան:
Զափաղանց կարոտել եմ Երևանին և ընկերներին և ամբողջ բնակչությանը,
կարելի է ասել: Մարդ միայն հայրենիքում իրան ևրջանիկ կզգա, ինչքան էլ
այդ հայրենիքը անշուք և խեղճ լինի: Իր ժողովրդի հետ, իր լեզվով խոսող
մարդկանց մեջ: Այդ միջավայրում միայն կա քաղցրություն, սրտարացություն,
հարազատություն:

Յուլիի հիվանդությունն մասին վաղուց է լսել էի. շա՛տ և շա՛տ ուրախ եմ,
որ փրկվել է: Իսկ ի՞նչ է պատահել Միշոյին (Մանվելյանին), ինչո՞ւ է հիման-
դացել: Հանգիստ եմ, ոո գրում ես թե՛ լավի է դառնում: Լսել եմ, որ «Արու-
նայան» վրացերեն լեզվով լույս է տեսել⁷³: Խնդրում եմ, մյուս նամակովդ գրե՛ս
դրա մասին:

Բարեններ բոլոր-բոլոր ընկերներին՝ Յուլիին, Պողոս Արելյանին, Գերենի-
կին, Սիսակին, Միշոյին, Փանոս Թերլեմեզյանին, Մ. Սարյանին, Հակոբ Խա-
չատրյանին⁷⁴, Թ. Ավդալբեկյանին⁷⁵, Արշակ Տոնյանին, Թ. Թորամանյանին⁷⁶
և մյուս սիրելի ընկեր, բարեկամներին:

Կնոջս, Վիգենի և իմ կողմից կարոտով բարեններ քեզ և տիկին Ռիմային⁷⁷:

Համբույրներով միշտ քո՝
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

14. * ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎԵՆՅԱՆԻՆ

29 մարտի. 1934, Փարիս

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և վերջին անգամ ուղարկածդ նամակը լուսանկարով
միասին. ուղարկել եմ իսկույն Պարույրին⁷⁸, բայց մինչև օրս նրանից պատաս-
խան չունեմ: Սակայն վատ բաներ չմտածես. որովհետև չկան. հասցեն փոխել
էր. գնացել էր մի նոր տեղ, նոր սանատորիա, ուր արդեն լավ դարձածներն են
դնում: Հանգիստ եղիր. «ՀՕԿԻ»⁷⁹ միջոցով կդրեմ, տեղեկություն կստանամ:

Սիրելիս, չես գրում, թե ստացա՞ր Պարույրի ուղարկած լուսանկարը. վա-
ղուց եմ ուղարկել: Հետո գրել էի: «Յայնմաւորքի» մասին: Այդ առթիվ էլ էի
դրել, որ՝ առնող չկա, կամ եթե առնող էլ լինի, պետք է ապրանքը, առարկան
տեսնեն: Ոչ մեկի մասին չգրեցիր:

Ներփակ ուղարկում եմ ռումանական «ՀՕԿԻ» վկայագիրը Պարույրի մա-
սին: Մեր «ՀՕԿԻ» թղթերից ելալ. մոռացած էին իր ժամանակին ուղարկել:

Շնորհակալ եմ, սիրելի Գարեգին, տված լուրերիդ համար: Եթե մի բան
կատարվում է հայություն մեջ, դա էլ Հայաստանումն է կատարվում: Ստա-
ցանք «Ասպիտալը»⁸⁰, ի՞նչ հոյակապ գործ. կեցցե՛ Թ. Ավդալբեկյանը—ո՛նց

Հերոսաբար հաղթահարել է Մարքսի դժվարահաղթ լեզվին. Ե՛րբ Թադևոսը սորվեցավ այդքա՜ն գերմաներեն. դարմանալի մարդ է. հանձարեղ մարդ է Ավ-
սյալբեկյանը—հազար անգամ կեցցե՛ :

Գրականության պատմությունը⁸¹ դեռ չեմ կարդացել. կարդամ, կգրեմ <նրա> մասին: Երևի կստանանք Բունիաթյանի «Գառնին»⁸². շա՛տ եմ հետա-
քրքրվում: Կեցցե՛ք Երևանցիներդ. ի՜նչ մեծ գործեր եք կատարում: Գաղու-
թահայության մեջ բան չկա. ջուր ծեծել է. դավաակություն, բռնություն, ածա-
կաններ...

Շա՛տ և շա՛տ ցավեցի Թորոմանյանի կորուստի վրա⁸³. շա՛տ համով մարդ
էր, և իհարկե՛ն՝ եղակի մասնագետ:

Այսպե՛ս, սիրելիս, դնում են մեր սերունդի խոշորները, մեր ընտիրները⁸⁴.
Անհունորեն ցավալի է այս օրենքը:

Ես էլ շուտ-շուտ հիվանդանում եմ. սիրտս լավ է, բայց պիտի շատունակ
խնամել: Այս մոտ օրերս գյուղ եմ գնում, Փարիզի մոտիկ մի գյուղ. այնտեղ
պիտի մնամ մի քանի ամիս, որպեսզի թե հանգստանամ Փարիզի այս տենդից
ու աղմուկից, ժողովներից, վեճերից, և ամփոփվեմ, գրեմ: Շա՛տ եմ ուզում
գրել, բայց միշտ խանդարվում եմ: Էնքան շմեռների, կիսատ գրություններս
ավարտելի, վերադառնալի երևան, և այնտեղ դոցեի սչքերս: Ծերությունը ար-
դեն յիաթթում է մեզ...

Դու ինչպե՛ս ես. ինչպե՛ս է առողջությունդ. գրել էիր մի անգամ, թե
սիրտդ սկսել է մի քիչ թուլանալ. հիմա ինչպե՛ս ես: Կամ պահիր քեզ: Ինչպե՛ս
է Դերենիկի առողջությունը. գրի՛ր. ամեն անգամ նրան բարեններս տո՛ւր, և մեր
բոլոր ընկերներին: Շա՛տ ուզում եմ բոլոր սրտագին ընկերներին գրել՝ Դերե-
նիկին, Միշուին, Պողոսին, Յուլիին: Բայց չի լինում, ժամանակ չկա:

Հսեցինք, որ Ե. Չարենցը մի նշանավոր զիրք է գրել⁸⁵, բայց չտեսանք.
մեկն ու մեկին, որ ունեն, ասա, որ մի հատ ուղարկեն մեզ, «ՀՅԿ-ին»...

Շա՛տ բարեններ բոլոր մեր ընկերներին, սիրո և կարոտի բարեններ: Բարեկո
կնոջդ. բարեններ մերոնցից:

Ի՜նչ եղավ Ա. Բամանյանի ժողովրդական տան շենքը⁸⁶. բարձրանո՞ւմ է
բարդյոք...

Համբույրներով. րո ԱՎԵՏԻՔ

Ծ Ա Ն Ո Թ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Թումանյանի պատասխան նամակը տե՛ս Հովհ. Թումանյան, «Երկերի ժողովածու», հատոր V, 1945, էջ 459—461:

2. Համաշխարհային ճանաչում գտած հայ երկու մեծ արվեստագետները՝ Ավետիք Իսահակյանը և Մարտիրոս Սարյանը միմյանց հետ ծանոթանում, ապա և մտերմանում են 1924 թ. ամառը Վենետիկում, ուր Սարյանը գնացել էր մասնակցելու կերպարվեստի XIV միջազգային ցուցահանդեսին: Իր «Ճամբորդական տպավորություններում» («Նորք», գիրք 5—6, 1925, էջ 338) այդ մասին Սարյանը գրում է. «Ինձ հայտնի էր, որ այստեղ (Վենետիկում—Ա. Ի.) է ապրում հայտնի հայ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որին ես կուզեի հանդիպել, մանավանդ այստեղ, այս ծով անծանոթների շրջանում... Հրապարակում թրեկելով և գլխավորապես կաֆեներում նստածների դեմքերը դիտելով, ես նկատեցի Իսահակյանի դեմքին խիստ նման մի դեմք (Իսահակյանին ես միայն բուսանկարով էի ճանաչում): Համոզվելով, որ չեմ սխալվում, վճռեցի մոտենալ և հարցնել: Իմ ենթադրությունը ճշտվեց: Եվ այդ օրվանից հետո, բուրեկամարար բաժանվելով, մենք այնուհետև յուրաքանչյուր օր հանդիպում էինք իրար: Նրա շնորհիվ Վենետիկին և տեղիս հայերին ծանոթանալը հեշտանում է»:

3. Վահան Թոթովենցն այդ ժամանակ, դրական-ստեղծագործական աշխատանքին զուգորենիաց, Պետական համալսարանում ավանդում էր սնգլերեն և վարում էր դիվանի վարիչի պաշտոնը:

4. Խոսքը վերաբերում է 1924 թ. մենշևիկյան ավանտյուրային Վրաստանում:

5. Ստ. Զորյանի պատմվածքների ժողովածուն, որ լույս է տեսել 1924 թ.:

6. Վ. Թոթովենցի լավագույն պատմվածքներից մեկը, որ 1924 թ. «Նոր ակոս» շաբաթաթերթում տպագրվելուց հետո, լույս է տեսել առանձին գրքույկով:

7. Դ. Դեմիրճյանի «Քաջ նազար» կոմեդիան առանձին հրատարակությամբ լույս է տեսել 1924 թ.:

8. «Տխուր մարդիկ»—Ստ. Զորյանի պատմվածքների առաջին ժողովածուն, որ լույս է տեսել 1918 թ. Թիֆլիսում:

9. 1920—30-ական թվականներին ամենատարածված մայրենի լեզվի դասագիրքը, որի առաջին—երրորդ տարիները կազմել է Մարուքե Դուրգարյանը, չորրորդ—յոթերորդ դասարաններինը՝ Սուրխաթյանը: «Կարմիր արև» դասագրքում տեղ էին գտել նաև Իսահակյանի բանաստեղծություններից նմուշներ և հատվածներ նրա «Սասմա Մհեր» պոեմից:

10. Կոնչալովսկի Պ. Պ. (1876—1956)—Սովետական նշանավոր գեղանկարիչ, ՌՍՖՍՌ ժողովրդական նկարիչ: Մ. Սարյանի հետ մասնակցել է 1924 թ. կերպարվեստի XIV միջազգային ցուցահանդեսին Վենետիկում:

11. Տերնովեց Բ. Ն. (1884—1941)—Սովետական արվեստաբան, XIX—XX դդ. ռուս և արևմտավրոպական արվեստի հարցերին նվիրված մի շարք ուշագրավ աշխատությունների հեղինակ: Վենետիկի 1924 թ. կերպարվեստի XIV ցուցահանդեսի սովետական պավիլիոնի կազմակերպիչը:

12. Ալեքսանդր Մյասնիկյանի մահը, օդային աղետի հետևանքով, տեղի է ունեցել 1925 թ. մարտի 22-ին: Մյասնիկյանի հետ Իսահակյանը ծանոթացել է, հավանաբար, 1904 թ. Մոսկվայում, Լադարյան ճեմարան այցելելիս:

13. Պողոս Մակինցյան (1884—1938)—գրականագետ-քննադատ, սովետական պետական գործիչ, եղել է Սովետական Հայաստանի լուսժողովում:

14. Լուկաշին—Սարգիս Սրապիոնյան (1884—1957), Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին քարտուղար (1921), ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ:

15. Ե. Զարենցը 1924 թ. վերջերին ուղևորվում է արտասահման ճանապարհորդելու: 1925 թ. մարտին մոտ մեկ ամիս անցկացնում է Վենետիկում, ուր ծանոթանում և մտերմանում

է Իսահակյանի հետ:

16. Ասքանազ Մուսկյան (1886—1929)—Սովետական Հայաստանի պետական ակադեմիայի պրոֆեսոր, եղել է արտաքին գործերի և լուսավորության ժողովրդական կոմիսար:

17. Լուսիկ Սարյան—Մարտիրոս Սարյանի կինը, Ղազարոս Աղայանի դուստրը:

18. Խոսրը վերաբերում է Լ. Ն. Չարենցի «Էլեգիա, գրված Վենետիկում» պոեմին, որ առաջին անգամ տպագրվել է «Նորք» հանդեսի 1926 թ. առաջին գրքում (էջ 73—83):

19. Դ. Դեմիրճյանի «Կովի դաշտում» պատմվածքը, որ հեղինակը հետագայում վերանվանել է «Միայն մեկը», առաջին անգամ տպագրվել է «Նորք»-ում, 1926, գիրք առաջին, էջ 26—46:

20. Իսահակյանը նկատի ունի Ս. Բակունցի «Իվան Բեյլը» պատմվածքը, տպագրված «Նորքի» 1926 թ. առաջին գրքում (էջ 47—69): Գոգոլի ազդեցության փաստը ճիշտ է նշված, բայց, մեր կարծիքով, այն չափազանցված է:

21. Սեբար—Պողոս Մակինցյանի կինը, Սովետական Հայաստանի վաստակավոր դերասանուհի:

22. Մ. Սարյանը Փարիզ է գործուղվել 1926 թ. օգոստոսին և այնտեղ մնացել մինչև 1928 թ. փետրվար ամիսը: Այդ ժամանակամիջոցում, Ֆրանսիայի մայրաքաղաքում նա կազմակերպել է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը և նկարել է ավելի քան երեք տասնյակ նկար, որոնք, դժբախտաբար, ֆրանսիական շոգենավով Սովետական Միության ուղարկվելիս, այրվեցին՝ նավի վրա առաջացած հրդեհի ժամանակ:

23. Ըստ բիբլիական լեգենդի, Քրիստոսի առաքյալներից մեկը, որ թերահավատության մեջ է վերաբերվել Քրիստոսի «հարությունը»: Անցյալում «Թովմաս առաքյալ» անունը դրածովել է որպես հոմանիշ թերահավատության:

24. Իսահակյանը, հանգամանքների բերումով, Սովետական Հայաստան է գալիս իր նախագծածից տարբեր երթուղիով (ո՛չ թե Վենետիկ—Բեռլին—Մոսկվա—Թիֆլիս, այլ՝ Վենետիկ—Կ. Պոլիս—Բաթում—Թիֆլիս):

25. Սիմոն Փիրումյան—Ֆրանսիայում Սովետական Միության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական:

26. Եղիա Չուբար (1897—1938)—Սովետական գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս: Եղել է «Նորհրդային Հայաստան», «Նոր ակոս», «Վերելք», «Անհիմնյան ուղի», «Նոր ուղի» պարբերականների խմբագիր: Այդ ժամանակ (1926 թ.) Փարիզում խմբագրում էր «Երևան» նախ եօրյա, ապա երկօրյա թերթը:

27. Գևորգ Աֆրիկյան (1887—1918)—Իսահակյանի քրոջ որդին: Ժամանակի հուսատու երիտասարդ բանաստեղծներից մեկը: Իր քնարական բանաստեղծություններով աշխատակցել է 1910-ական թվականների պարբերական մամուլին, մասնավորապես Գ. Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսին:

28. Աքա (Ագապի)—Իսահակյանի՝ Գևորգ Եղբոր կինը:

29. Աշխեն, Նվարդ, Սեզա, Թամարա—Թումանյանի դուստրերը:

30. Մուշեղ, Համլիկ—Թումանյանի որդիները:

31. Անուշ, Արփիկ—Թումանյանի դուստրերը:

32. Օլյա—Օլգա Թումանյան—Թումանյանի կինը:

33. Վիգեն—Իսահակյանի որդին:

34. Սնար—Սիմոն Նարինյան (1887—1941)—Հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Ամերիկայում հրատարակվող կոմունիստական «Բանվոր» թերթի խմբագիր: 1925 թ. Սովետական Հայաստան գալով վարել է մի շարք պաշտոններ, եղել Պետհրատի դիրեկտոր:

35. Սիմոն Հակոբյան (1888—1938)—Գրականագետ-քննադատ, Երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր: Գրել է ուսումնասիրություններ նվիրված Շիրվանզադեին, Արփ. Արփիարյանին, Եղիշ Չարենցին: 1922—1924 թթ. Վիեննայում և Բեռլինում խմբագրել է սովետական դիրքորոշում ունեցող «Արեգ» գրական-գիտական ամսագիրը:

36. Սիսակ Տեր-Սիմոնյան—Իսահակյանի երիտասարդության ընկերներից: Գրական-հասարակական, պետական գործիչ Դրաստամատ Սիմոնյանի հորեղբայրը:

37. Ռուբեն Իսահակյան—Իսահակյանի եղբայրը:

38. Տերտերը—Իսահակյանի քրոջ ամուսինը:

39. Մամիկոն Գևորգյան (1877—1962)—Գրական-հասարակական և թատերական գործիչ, խորհրդային:

40. Միութենական կառավարությունը այդ գումարը հատկացրել էր 1926 թ. Երկրաշարժի աւերված Հենինականը վերակառուցելու նպատակով:

41. Սովետական Հայաստան կատարած իր առաջին այցի ժամանակ, որ տեղի ունեցավ չորս տարի (1926—1930), Իսահակյանը հրատարակել է չորս գիրք՝ «Լիլիթ», Թիֆլիս, 1927. «Համբերանքի չիրուխը», Երևան, 1929. «Արու-Հալա Մահարի», Երևան, 1929 և «Բանաստեղծություններ», Երևան, 1930: Իսահակյանի խոսքը. թե՛ «այս ամսին Երկու գիրք պիտի լույս ընծայեմ»՝ վերաբերում է «Լիլիթ» և «Համբերանքի չիրուխը» արձակ երկերի ժողովածուներին:

42. Նիկ. Աղոնց (1875—1942) — ականավոր պատմաբան, հայագետ:

43. Երվանդ Քոչար — սովետահայ նշանավոր նկարիչ և քանդակագործ. ՀՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ:

44. Գարո (Գարրիել Քոչարյան) — Սոֆյա Իսահակյանի Եղբայրը:

45. Գեղամ Կոստանյան — Իսահակյանի մորաբորջ որդին, բանասեր Կարապետ Կոստանյանի Եղբայրը:

46. Նիկողայ — Նիկողայոս Աղոնց:

47. Դանուշ (Դանիել) Շահվերդյան (1882—1937) — Հասարակական-քաղաքական գործիչ: Այդ ժամանակ Սովետական Հայաստանի ղեկնադիրական ներկայացուցիչն էր Ֆրանսիայում:

48. Հավանորեն խոսքը «Արու Հալա Մահարի» ձեռագրի մասին է, որ Իսահակյանը խնդրել էր ուղարկել պոեմի վեցերորդ (Երևանի) առանձին հրատարակությունը պատրաստելու համար (լույս է տեսել 1929 թ.):

49. Սահակ Տեր-Գարրիելյան (1886—1937) — Կոմունիստական պարտիայի և Սովետական Մետոյիան ականավոր գործիչ, Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ (1929—1935):

50. Նկատի ունի Հայաստանի Սովետների VI համագումարը, որ տեղի է ունեցել 1929 թ. ապրիլի առաջին կեսին:

51. Իսահակյանի՝ Սովետական Հայաստանում գտած ջերմ ընդունելության առթիվ պաշտակցականները, գրավոր և բանավոր, պրովոկացիոն լուրեր էին տարածում Սովետական իշխանության և նրա հավանավորությունն ու հոգատարությունը վայելող բանաստեղծի դեմ:

52. Աղբյուրների և Վրաստանի սովետական գրողների պատվիրակությունները բարեկամական այցով Հայաստան են եկել 1929 թ. ապրիլի 6-ին. հունիսի 10-ին, հայ գրողների պատվիրակության հետ (որի մեջ էր նաև Իսահակյանը) նրանք մեկնում են Վրաստան, այնտեղից էլ հունիսի 20-ին՝ Աղբյուրների Հայ գրողների պատվիրակությունը Երևան է վերադառնում հունիսի 29-ին:

53. Նկատի ունի «Համբերանքի չիրուխը» խորագրով ժողովածուն (Երևան, 1929), որ, բացի համանուն պատմվածքից, տեղ էին գտել՝ «Ուշինարա», «Եղնիկը», «Ինչու՞մն է սիրփանքը», «Ֆաթիհ Սուլթան-Մեհմեդ» արձակ երկերը:

54. Այստեղ ակնարկված՝ Իսահակյանի բանաստեղծությունների ժողովածուն լույս է տեսել 1930 թ. Երևանում, որ տեղ են գտել բանաստեղծի չափածո երկերը, բացի «Արու Հալա Մահարի» և «Սասմա Մհեր» պոեմներից, առակներից և թարգմանություններից: Ժողովածուն լույս է տեսել գրականագետ-քննադատ Գուրգեն Վանանդեցու «Ավետիք Իսահակյանի ստեղծական» վերջաբանով:

55. Արսեն Ղլաճյան — Իսահակյանի մորեղբոր որդին:

56. Գարեգին Լեոնյան (1872—1947) — Բանասեր-արվեստաբան, հայ նյութական և հոգևոր մշակույթի պատմության հարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ, խմբագիր-հրատարակիչ «Գեղարվեստ» հանդեսի (1908—1921), Իսահակյանի մանկության և պատանեկության ընկերներից:

57. Արփաշայ — Գարեգին արփա (թրք.) գարի բառից: Պարսկերենում արփա կամ արփաշահման չի նշանակում:

58. Սայաթ-Նովա, հայերեն խաղերի լիակատար ժողովածու, ներածական տեսությամբ, ծանոթագրություններով, բառարանով և խմբագրությամբ Գ. Լեոնյանի: Առաջարան Պ. Մալինյանի, Երևան, 1931:

59. Սայաթ-Նովայի խաղերի բնագրերը (ժողովարար), որ մեծ աշուղ-բանաստեղծի ժառանգներից ձեռք էր բերել Հայ գրողների կոմկոսյան ընկերությունը և պահվում էր Հովհ. Թումանյանի մոտ, 1921 թ. հոկտեմբերի 19-ին Թումանյանը ուղարկում է Հայաստանի լուս-ժողովուն, Երևանի թանգարանում պահելու համար, որ և գտնվում է այժմ:

60. Գեորգ Ախվերդյան (1818—1861)—նշանավոր բանասեր, Սայաթ-նովայի խաղերի առաջին ուսումնասիրողը և հրատարակիչը («Սայաթ-նովայ, լուս գյաթ աշխատասիրութենով Գեորգեայ Ախվերդեան», Մոսկվա, 1852)։

61. Խոսրը, հավանորեն, վերաբերում է Սայաթ-նովայի խաղերի բառարանին։

62. Միշո—Միրայել Մանվելյան (1877—1944)—ՀՍՍՌ Ժողովրդական դերասան և գրող։

63. Պողոս Աբելյան—տնտեսագետ-վիճակագիր։

64. Յուլակ Խանզադյան (1886—1935)—Գրականագետ-քննադատ, Երևանի համալսարանի դասախոս։

65. Էփրիկյաններ—պոլիգրաֆիստ Միսակ Էփրիկյանը (1892—1938) և իր կինը։

66. Ուրաբտու—քանդակագործ, ՀՍՍՌ Ժողովրդական նկարիչ Այծեմնիկ Ուրաբտու։

67. Արշակ Տոնյան—մաթեմատիկոս, Երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր։

68. Փանոս Թերլեմեզյան (1865—1941)—ՀՍՍՌ Ժողովրդական նկարիչ։

69. Կոչոյան—Հակոբ Կոչոյան (1884—1959)—ՀՍՍՌ Ժողովրդական նկարիչ։

70. Խոսրը, հավանորեն, վերաբերում է «Հոկտեմբեր-նոյեմբեր» «գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության տարեգրքին», որ Ե. Չարենցի, Ա. Բակունցի և Ե. Չուբարի խմբագրությամբ լույս է տեսել 1932 թ.։ Այդ տարեգրքում տպագրված է մի ֆրագմենտ Իսահակյանի «Նրանք դրոշակ ունին» պատմվածքից (ԼՂ 14—20)։

71. Իսահակյանը նկատի ունի Սայաթ-նովայի «Հայերեն խաղերի լիակատար ժողովածուն» (Երևան, 1931) կցված Պ. Մակինցյանի առաջաբանը։

72. 1930 թ. կեսերից մինչև 1936 թ.՝ իր վերադարձը Հայաստան, Ավ. Իսահակյանը, որպես Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) փոխնախագահ, Լոնդոնում աշխատանք է կատարել ֆրանսահայ գաղութում։

73. «Աբու Լալա Մահարին» վրացերեն, վրաց հայտնի բանաստեղծ Տիցիան Տաբիձելի թարգմանությամբ և Իսահակյանի «Իմ «Աբու Լալա Մահարի» պոեմի հրատարակության առթիվ» առաջաբանով լույս է տեսնում 1931 թ. Բքիլիսիում, Առաջաբանը՝ իր պոեմի վրացերեն առաջին հրատարակության առթիվ Իսահակյանը գրել էր Տիցիան Տաբիձելի խնդրանքով, 1929 թ. Երևանում։

74. Հակոբ Խաչատրյան (1884—1960)—թարգմանիչ, Հայտնի են հայ կլասիկ գրականության բնույթի նմուշների նրա ռուսերեն թարգմանությունները։

75. Թադևոս Ավդալբեգյան (1885—1937)—ականավոր տնտեսագետ և բանասեր, Մարքսի «Կապիտալի» հայ թարգմանիչը, հեղինակ հասարակագիտական-տնտեսագիտական, Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի պատմության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների։

76. Թորոս Թորամանյան (1864—1934)—ականավոր ճարտարապետ և հնագետ, Գիտական մեծ արժեք են ներկայացնում նրա հետազոտությունները Հայաստանի պատմական ճարտարապետության վերաբերյալ, որոնք ամփոփված են երկու սովոր հատորներում՝ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» (առաջին հատոր, 1942, երկրորդ հատոր, 1948)։

77. Ռիմա Լևոնյան—Գարեգին Լևոնյանի կինը։

78. Պարույր Լևոնյան—Գարեգին Լևոնյանի եղբայրը։

79. ՀՕԿ—Հայաստանի օգնության կոմիտե—կազմակերպվել է 1921 թ. Հայաստանի վերադինությանը նպաստելու և սփյուռքահայությունը հայրենիքի հետ կապելու նպատակով։ ՀՕԿ-ի առաջին նախագահը եղել է Հովհ. Թումանյանը, 1930—1936 թթ. Իսահակյանը եղել է ՀՕԿ-ի փոխնախագահը։

80. Կ. Մարքսի «Կապիտալի» առաջին հատորը Թադ. Ավդալբեգյանի թարգմանությամբ և Հ. Գյուլիբեկյանի, Ն. Մակինցի ու Ն. Ստեփանյանի խմբագրությամբ լույս է տեսել 1933 թ.։

81. «Հայ գրականության պատմություն», երկրորդ հատոր, ռուսահայ գրականություն, 30—60-ական թվականներ, խմբագրությամբ Դ. Սիմոնյանի, Հ. Գյուլիբեկյանի և Գ. Վանանդեցու, Երևան, 1933։

82. Հավանորեն նկատի ունի Ն. Բունիաթյանի՝ «Языческий храм при дворце Тиги-дата в крепости Гарни» աշխատությունը (Երևան, 1933)։

83. Թ. Թորամանյանը վախճանվել է 1934 թ. մարտի 1-ին Երևանում։

84. Նկատի ունի հայ կուլտուրայի գործիչների մահը՝ Սիրանուշ (1932, հունիսի 10), Լեն (1932, նոյեմբերի 14), Սպ. Մելիքյան (1933, մայիսի 4), Նար-Դոս (1933, հուլիսի 13)։

85. Ե. Չարենցի «նոր գիրքը»՝ «Գիրք ճանապարհի, պոեմներ և բանաստեղծություններ» ժողովածուն է, որ լույս է տեսել 1933 թ.:

86. Ա. Լ. Սպենգիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնի շենքը:

Ա. ԻՆՃԻԿՅԱՆ,

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ АВЕТИКА ИСААКЯНА

А. М. ИНДЖИКЯН

(Р е з ю м е)

Публикуемые впервые письма Аветика Исаакяна имеют важное значение для изучения жизни и творчества великого армянского поэта в период 1920—1930 гг. Они показывают, что Исаакян, будучи вдали от родины и переживая периоды душевного кризиса и исканий, с большим вниманием следил за жизнью в Советской Армении. В письмах особенно ярко выражена мысль Исаакяна о том, что армянскому народу необходимо уповать лишь на Советскую Россию. В этом он окончательно убеждается, когда в 1926 г. посещает Советскую Армению и воочию видит экономический и культурный подъем своей родины. Он пишет воодушевленные письма своим родным и друзьям, жившим в Париже. «Вне родины нет жизни и счастья»,— вот лейтмотив писем Исаакяна, одновременно бывший девизом всей его жизни и творчества. В 1934 г. Исаакян окончательно обосновывается в Советской Армении.